ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 27-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 13–րդ հոդվածի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Գեղիի Յու. Երիցյանի անվան N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2023 թվականի փետրվարի 21-ից 24-ն ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

1) ***Կարեն Հունանյան*** - աշխատանքային խմբի ղեկավար, մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

2) ***Մեղա Բաղդասարյան*** - անդամ, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

3) ***Տաթևիկ Հախվերդյան*** - անդամ, մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ,

4) ***Թերեզա Մաթևոսյան*** - անդամ, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ,

5) ***Համլետինա Հալաբյան*** - անդամ, մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ուսումնական հաստատության ուսումնասիրության ավարտից հետո հնգօրյա ժամկետում՝ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացնել համապատասխան տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք. Հրազդան